

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ. ԱՐԺԵՔՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ»

Միջազգային համաժողով

(Մայր Աթոռ Ս. Էջմիածին «Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարան, 9-10  
հոկտեմբերի, 2019 թ.)

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ հոկտեմբերի 9-ից 10-ը, Ընտանիքի տարվա միջոցառումների շրջանակներում Մայր Աթոռում տեղի կունենա «Եկեղեցին և ընտանիքը 21-րդ դարում. արժեքներ և մարտահրավերներ» խորագրով միջազգային համաժողով:

Համաժողովը նվիրված է ժամանակակից հասարակությունում Եկեղեցու և ընտանիքի հարաբերություններին և ընտանեկան արժեքների պահպանման հիմնախնդիրներին:

Միջազգային համաժողովի ընթացքում Հայաստանից և տարբեր երկրներից բանախոսներ, Քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ հանդես կգան զեկույցներով՝ ընտանիքի քրիստոնեական ըմբռնման, ամուսնության, ժամանակակից ընտանիքի մասին պատկերացումների, քրիստոնեական արժեհամակարգին և ընտանիքին ուղղված համաշխարհայնացման մարտահրավերների, իրավական և քարոզչական ոլորտներում ընտանիքի առջև ծառայած արդի խնդիրների և այլ թեմաների վերաբերյալ:

Համաժողովի աշխատանքային լեզուներն են հայերենը, անգլերենը, ռուսերենը: